

● Կիր. 20 Դեկտ. — Մայր Տաճարին մէջ քառօրեց Ծ. Միւռն Վրդ., նիւթ առնելով Ս. Նիկողայոսի երէկ կատարուած տօնէն, քրիստոնէական բարոյականի տեսակէտով թելադրական խորհրդածութիւններ եղբակացուց Ս. Հայրապետին կենսագրական մանրամասնութիւններէն:

● Դշ. 22 Դեկտ. — Ս. Կուսին յղութեան տօնին առթիւ, շերաշափառի թափօր կատարուեցաւ ի Գեթեմանի, գլխաւորութեամբ Տ. Մեհրապ Սրբազանի, որ պատարագեց, և մկռուէտե երանեցեան ինծ մանեայն աղգքն ճարարանով քարոզեց, և պանծացնելով ռուր Կուսին գեղազանց արժանիքները, անոր մէջ մատնանշեց զերբերջանիկ մօր տիպար զէմբը:

● Դշ. 23 Դեկտ. — Անկիւրեան եկեղեցւոյ Ծրուանդէնի եպիսկոպոսը Ս. Գատրիարը շօրացելեց, կանոնիկոս Տ. Գրիմէնի և քանանայի մը ընկերակցութեամբ:

● Ուր. 25 Դեկտ. — Լատինաց Ս. Ծնունդի տօնին առթիւ աւագ թարգման Տ. Հայրիկ Վրդ. ըստ իրաւական սովորութեան Բեկպիւնէմ գնաց ու ներկայ գտնուեցաւ Կանդիական կարգին:

● Եր. 26 Դեկտ. — Ս. Գատրիարը, ընկերակցութեամբ Տ. Մեհրապ Սրբազանի և Միարանից, շնորհաւարական այց առաւ Լատին Գատրիարքին, Ֆրանչիական Միարանութեան և Անկիւրեան եպիսկոպոսին:

● Կիր. 27 Դեկտ. — Ս. Գատրարքը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն:

● Բշ. 28 Դեկտ. — Բռնե անձրին ու սառտիկ ցուրդ, որունք երէկ ցերեկ և գիշերն ի բուն շարունակուեցան, այսօր թանձրացան ի ձիւն: Վեց տարուան մէջ այս երկրորդ անգամ լինելով ճերմկացաւ Երւսաղէմ:

— Աւագ թարգման Տ. Հայրիկ Վրդ., ըստ աւանդական սովորութեանց, ներկայ գտնուեցաւ Ս. Ծննդեան Տաճարի ընդ. առնելի ի պանդանութիւն աղգային իրաւանց:

Ն Ո Ւ Է Ի Ն Ե Ր

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրեմ 1936 տարւոյն մէջ Սրբոց Յակոբեանց ամառին մէջ Սրբավայրեան համար եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները.

1. Կիւրարեանի Տիկին Գեղանոյշ Սարգիսեան, սպիտակ կտաի վրայ ինքնաձեւագործ երկու կողմուսայ:

2. Ալեք. Եսանդրանակ Ձիւռնայի այրի Տիկին Սրբուհի Նիկիսպեան, վեց հաս զոյնզոյն խաչի բոնիչ:

3. Գիւրգի Օրորդ Վիկտորիա Ձիւ-Գէորգ.

եան, Ս. Աստուածմանի գերեզմանին մէկ մասանի՝ սպիկ օղակով ու սեւ խառով:

4. Մարաշի Տիար Յակոբ Տաքէեան, 2,10 X 1,30 մէր մեծութեամբ մէկ զորդ:

5. Դամասկոսեանի Գեառացի Տիկին Վիկտորիա, մանրակապովն կտաի վրայ սիւղեմի բանուած մէկ ծածկոց:

6. Ճիւրիպէցի Օրորդ Մաննիկ Թովմասեան, Ս. Դիւղիդի դրան կապոյտ արլատ մէկ վարագոյր:

7. Բեթիմասէն (Կրետէ) այրի Տիկին Մանիա Արերեան, կապոյտ արլատի վրայ ինքնաձեւագործ մէկ խաչի բոնիչ:

8. Դուրիդարեանի Վանեցի այրի Տիկին Հայկանոյշ Սոփանէսեան,

Մէկ ժամաւարի գօթի, արծաթեայ միւնկագարդ, Մէկ փոքր մասնաւոր արծաթեայ՝ սպվար բանուած:

Մէկ ղեղին պղինձէ թաւ Բանդակագարդ եւ իր պնձեր՝ նոյն նիւթէ:

Մէկ զոյգ ժամաւարի բազկան, կապոյտ բաւիճ ու կարմիր կեդաւաւ:

Երկու սպիտակ կտաւ սեղանի զարդ՝ ինքնաձեւագործ:

Երեք խաչի բոնիչ՝ զանազան նիւթերէ:

Երկու մեծաւոր բոնիչ՝ մին սպիտակ կտաի վրայ ինքնաձեւագործ եւ միւսը՝ մեծաւոր, եզերք ինքնաձեւագործ:

Երկու Յայսմաւորի ծածկոց, մին՝ ինքնաձեւագործ եւ միւսը մեծաւոր:

Յորս կողմուսայ, երկուք՝ կտաի վրայ ինքնաձեւագործ եւ երկուք զոյնզոյն մեծաւոր:

Մէկ Բիւրմանի շալ:

Երեք վարագոյր զանազան տեսարաններ ներկայացնող սպումոյ նկարներով:

Մէկ Ս. Յարութեան Հրեաթիկ Վէմին ծածկոց՝ ինքնաձեւագործ:

Երկու բարձի երես օպումոյ նկարներով:

Մէկ արծաթ օղակով հազիւ մասանի՝ Ս. Ծննդեան. Մէկ զոյգ մին պատկերով պոսե՝ Ս. Ծննդեան:

9. Այնթապի Տիկին Ա. Ն., մէկ սեղանի ծածկոց ինքնաձեւագործ եզերքներով, Ս. Աստուածմանի անձրիմ:

10. Հոգ. Տ. Բարթոլոմէոս Մ. Վրդ. Թագանակ Զոռնոզի, մէկ փիլոնի հարմանդ՝ զոյգ մը արծաթեայ սկեպորած սեղաններով:

Մէկ ձեւապիւր աւետարան:

11. Հանրակապովիցի Մանուհի Գետրոն Ձմալբեան, մէկ օխա Անթոքի ամուս խաչի:

12. Խորդէկէն Արժ. Տ. Յարութիւն Բոյ. Շերպէթեան, մէկ տապիւն նիւարի կաղապար:

13. Ս. Աթոռոյս միարան Հոգ. Տ. Ծառիկ Վրդ. Աթաբեան, մէկ փոքր զորդ՝ Ս. Կերեզմանի ժամաւարի նման:

14. Գարեգնատանցի Տէր եւ Տիկին Արշակ եւ Սիրան Բաբայեան, մէկ սպիտակ մեծաւոր վրայ նկարագարդ մէկ ծածկոց:

ՄԵՍՐՈՒՄ ԱՐՔԵՊՍ.

Proprietor — His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem Armenian Patriarchate, Jerusalem.

Editor — Father Hayrik Aslanian, Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.